

բղխի Լիբանան եւ Հերմոն լեռներէն եւ ընդարձակ դաշտերը թրջելով կը թափի Մեռեալ ծով:

Յորդանանի երկու անապատացած եզերքներուն վրայ՝ այն տեղ ուր մեր Տէրը մկրտուեցաւ, քրիստոնէական ջերմեռանդութիւնը մանաւանդ Դ. դարէն սկսեալ շէնցուցած է նախ մենակեացներու բազմաթիւ խուցերով, յետոյ հոյակապ վանքերով և եկեղեցիներով: Նոյն խակ Քրիստոսի մկրտուած տեղւոյն վրայ կառուցուած է փառաւոր եկեղեցի մը:

Բլէզանսի Անտոնինոսը կը պատմէ թէ իր ժամանակ (Չ. դար) ժողովուրդի մեծ բազմութիւն մը Աստուածայայտնութեան օրը կ'երթար գետին եզերքը, արչալոյսին լուացուելու համար: Ան կը պատմէ թէ փայտէ խաչ մը կար գետին մէջտեղը, եւ երկու եզերքները մարմարով ծածկուած էին, իւրաքանչիւրը գետ կը մտնէր սաւանով, զոր ամէն ոք կը պահէր իր մահուան օրուան համար: Ուխտաւորներէ առնուած տեղեկութեանց համաձայն՝ մկրտութեան նշանակուած տեղն էր Ս. Յովհաննէս Մկրտչի վանքին մօտերը: 530 ին թէոզոսիոս ուխտաւոր ուղեգիրը կը գրէ. «Այն տեղ ուր մեր Տէրը մկրտուած էր՝ տեսայ մարմարէ սիւն մը որուն վրայ կար երկաթէ խաչ մը: Հոն էր Ս. Յովհաննու Մկրտչի եկեղեցին՝ Անաստաս կայսեր կողմէ շինուած որ կամարներու վրայ բարձրացուած էր Յորդանանի ջուրերուն շատ մօտ ըլլալուն պատճառաւ... Տէրօջը մկրտուած տեղէն մինչև հոն ուր Յորդանանը Մեռեալ ծով կը թափի, հինգ մղոն է»: 780 ին Վիլլիպալտ կ'այցելէ և կը վկայէ թէ Յորդանանի աջ կողմը կը գտնուէր եկեղեցի մը որ քարէ սիւներու վրայ բարձրացած էր. հոս այն տեղն է ուր Տէրը մկրտուեցաւ եւ կար փայտէ խաչ մը եւ ջուրի